# Բացատրագիր

Երևանի կենդանաբանական այգու կենդանիների նոր կարանտինի նախագիծը իրականացվել է համաձայն պատվիրատուի պահանջների: Նախագծի մշակմանը ներգրավված են եղել միջազգային մասնագետներ, այն հասել է իր ավարտուն տեսքին միջազգային մասնագետների հետ քննարկման, հիմնվելով EAZA-ի պահանջներին և ՀՀ քաղաքաշինության շին.նորմերին:

Նախագծով նախատեսվում է կառուցել կենդանիների նոր կարանտին , սպասարկող ադմինիստրատիվ շենքը, որտեղ լինելու է կաթսայատուն՝ կարանտինի փակ մասում ջեռուցում իրակացնելու համար, և աշխատողների համար աշխատասենյակ, հանդերձարան, սանհանգույց: նախատեսվում է ապամոնտաժել տարածքի անցակետը, մուտքի մետ. դարպասները և նորը կառուցել, մուտքի նոր դարպասներից մինչ գոյ.ունեցող ասֆալտապատ ճանապարհի ընկած հատվածում կատարել գրունտային ճանապարհի համահարթեցում և նոր 3 հենապատերի կառուցում:

Կենդանիների նոր կարանտինը բաղկացած է հինգ բլոկներից՝ ( Ա,Բ,Գ,Դ,Ե) որտեղ Բ և Դ բլոկներում լինելու են թռչուններ, իսկ բոկ Գ-ն նախատեսված է կապիկների համար, այդ իսկ պատճառով բլոկ Գ-ի՝ ներքին հատվածի հատակները և պատերը նախատեսվում է հարդարել կերամիկական սալիկներով, որպեսզի այն հնարավոր լինի ախտազերծել, իսկ մնացած բլոկերի թե ներքին և թե արտաքին հատվածները իրականացնել բետոնե հատակներով և ց/ա սվաղով: Կենդանիների նոր կարանտինի բոլոր փակ հատվածներում նախատեսվում է կատարել ջեռուցում և օդափոխություն, իսկ հատակները որոշակի թեքությամբ որպեսզի հնարավոր լինի ավելի հեշտ իրականացնել տարածքների մաքրումն ու խնամքը: Կենդանիների նոր կարանտինը նախատեսվում է իրակացնել հիմնականում մետաղական կարկասով ,իսկ փակ տարածքները 200մմ հաստ պեմզաբլոկներով:

Կենդանիների նոր կարանտինի կառուցումից հետո նախատեսվում է ապամոնտաժել այգու գլխավոր ճանապարհի արջերից մինչ առյուծներ հատվածում գտնվող բոլոր կենդանիների վանդակների և շինությունների ապամոնտաժումները:

## Աշխատանքների իրակացման հաջորդականություն

1. Կենդանիների կարանտինի և ճանապարհի հենապատերի իրականացում
2. կարանտինի ադմինիստրատիվ շենքի, նոր անցակետի, մուտքի նոր դարպասների իրակացում
3 . Այգու գլխավոր ճանապարհի արջերի ազատավանդակից մինչ առյուծների ազատավանդակ հատվածում բոլոր կենդանավանդակների ապամոնտաժում

### Շինարարական նյութերին և կոնստրուկցիաներին ներկայացվող պահանջներ

Իրականացվող աշխատանքներում օգտագործվող շին. կոնստրուկցիաները և նյութերը պետք է ունենան առնվազն 10 տարվա երաշխիքային ժամկետ:

### Աշխատանքներն իրականացնելու համար պահանջվող լիցենզիաներ

Քաղաքացիական բնագավառում շինարարության իրականացում ըստ հետևյալ ոլորտների
1. Բնակելի,հասարակական և արտադրական
2. Հիդրոտեխնիկական
3. Էներգետիկ
4. Կապի

### Աշխատանքային ռեսուրսներ

1. Աշղեկ՝ Ինժեներ-շինարար «ԱՔՇ», առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով.
2. Ինժեներ-հիդրոտեխնիկ,առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով.
3. Ինժեներ-Էլեկտրոտեխնիկ,առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով.
4. Կապի ինժեներ, առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային փորձով

### Տեխնիկական միջոցներ

1. Ինքնաթափ ավտոմեքենա 1 հատ
2. Էքսկավատոր 1 հատ
3. Բետոնախառնիչ 1 հատ
4. Բետոնամղիչ 1 հատ
5. Ավտոկռունկ 1 հատ

| Չափ.մ. | Մաս.թ. | Թերթեր | Փաստ. | Ստորագր. | Ամսաթիվ | Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան /N ԵՔ-ԲԸՅԱԾՁԲ-16/ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՆԳճ | | Յ. Յովսեփյան | | | | Երևանի կենդանաբանական այգու Կենդանիների նոր կարանտինի նախագիծ | Էտապ | Թերթ | Թերթեր |
| Ճարտարապետ | | Ա. Օրագյան | | | | | ճՇ | 2 | |
| Նախագծող | | Ն. Սարդարյան | | | | Ընդհանուր տվյալներ | <<Սուֆետ>> ՍՊԸ | | |

D:\work\sufet logo\Sufet Just.jpg